ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *«Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում»*

Ուսուցիչ՝ *Գյուլնարա Աղեկյան*

Պատրաստ է պաշտպանության

Մալաթիա–Մեբաստիա 2023

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Ներածություն.....3

1. «Էպոս » , «Էպիկական ժանր» հասկացությունները պատմական համատեքստում 4
2. Սովորողների մոտ հայրենասիրության և արժեքայինհամակարգի ձևավորման ուղիները.....8
3. «Սասունցի Դավիթ» էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման հիմքում 11

Եզրակացություն.....15

Գրականություն.....16s

Ներածություն

Հետազոտական աշխատանքը ներկայացրել ենք՝ ***«Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում»:***

Թեմայի արդիականություն: Պայմանավորված վերջին շրջանում աշխարհ–քաղաքական ներգործությունների զարգացումներով հայրենասիրական դաստիարակության կատարելագործումը դարձել է ժամանակի հրամայականը: Դա

հայ էթնոսի պատմական առաքելության կարևորագույն գաղափարաբարոյական հենասյուներից մեկն է: Հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում կարևոր դեր է ունեցել «Սասունցի Դավիթ» էպոսը: Արդեն մի քանի տարի է, ինչ պայքար է մղվում անդառնալի կորուսների գնով պահված ամենաթանկ ու անգնահատելի արժեքի՝ Հայաստանի Հանրապետության պետականության պահպանման համար: Այժմ դժվար ժամանակներ են և կարելի է ասել, որ մեր պետականության պահպանությունը վտանգված է՝ ինչպես դարեր առաջ:

Մեր կողմից հետազոտվող թեմայի ***նպատակն է*** ներկայացնել «Սասունցի Դավիթ» էպոսի դասավանդման կարևորությունը, որպես ազգային արժեհամակարգի և ինքնության ձևավորման աղբյուր: Նպատակից բխող ***խնդիրներն են՝***

1. ***Ներկայացնել էպոս և էպիկական ժանր հասկացությունների էությունը տարբեր ազգերի մոտ:***
2. ***Ընդգծել ազգային արժեքային համակարգի և հայրենասիրության կարևորությունը:***
3. ***Բացահայտել «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցման առանձնահատկությունները, որպես ազգային արժեհամակարգի ձևավորման աղբյուր:***

1. *«Էպոս» , «Էպիկական ժանր» հասկացությունները պատմական համատեքստում*

Գեղարվեստական ստեղծագործության տեսակներից ամենահինը էպոսն է: Էպոսի ամենավաղ ձևերն առաջացել են նույնիսկ պարզունակ համայնքային համակարգի պայմաններում և կապված են մարդու աշխատանքային գործունեության հետ, նրա բնությունը նվաճելու, ցեղերի բախումների հետ: Իր զարգացման ընթացքում էպոսը մեծ փոփոխություններ է ունեցել, ծաղկել և անկում ապրել: Փոխվել են նրա սյուժեները, հերոսները, ժանրերն ու ոճը: Հիմնականում դրանում ավանդադրված էին տարբեր պատմական դարաշրջանների շերտեր:

Էպոսը *(հին հունարեն՝ ἔπος «խոսք», «ասք»,* «պատմություն»), գործածվում է երկու իմաստով: ***Լայն*** իմաստով գրական երեք սեռերից մեկն է՝ էպիկական, քնարական, դրամատիկական ժանրեր: ***Նեղ*** իմաստով ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից[1]:

Էպոսի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն վերարտադրում է հեղինակին արտաքին իրողություն, սովորաբար առանց հեղինակի միջամտության, որի անհատականությունը հիմնականում թաքնված է ընթերցողներից:

Էպոսում պատմությունն իրականացվում է իրական կամ պայմանական պատմողի, վկայի, իրադարձությունների մասնակցի և, ավելի հազվադեպ, դեպքերի հերոսի անունից: Էպոսը օգտագործում է ներկայացման տարբեր ձևեր՝

- *պատմվածք,*
- *նկարագրություն,*
- *երկխոսություն,*
- *մենախոսություն,*
- *հեղինակի շեղումներ:*

Էպոսը մեծ հնարավորություններ է տալիս իրականության բազմաբնույթ պատկերման և մարդուն ուրվագծելու իր բնավորության, հանգամանքների, իրադարձությունների դրդապատճառների և կերպարների վարքի զարգացման մեջ: Դյուցազներգության մեջ շարադրանքը սովորաբար անցյալ ժամանակով է կատարվում, ինչպես արդեն տեղի ունեցած իրադարձությունների մասին, և միայն նոր գրականության մեջ էպոսը ներառում է ինչպես ներկա, այնպես էլ անցյալ, ներկա և ապագա ժամանակների համադրություն: Էպոսի լեզուն հիմնականում պատկերազարդ է, ի տարբերություն երգի բառերի, որտեղ գերակշռում է հուզական և արտահայտիչ խոսքը:

Էպոսի հատուկ տեսակներն են էպոսը, էպիկը, հեքիաթը, վեպը, պատմությունը, բանաստեղծությունը, առակը, անեկդոտը և այլն: Էպոսը էպիկական

[1] ՀՍ հանրագիտարան հատոր 4, Ե. 1978:

գրականության ամենամեծ և մոնումենտալ ձևն է: Հին հերոսական էպոսը և ժամանակակից էպոսը էապես տարբերվում են:

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը: Էպիկական ժանրի զարգացումը գրականության մեջ ունի փուլային բնույթ և պայմանավորված է պատմական իրադարձությունների ընթացքով: Ազգային էպոսների ծնունդը սովորաբար ուղղորդվում է պանեգիրիկների[2] կամ «հերոսապատումային մահախոսականների» և հերոսական աշխարահայացքին մոտ ողբերի զարգացումով: Այդ գրական ստեղծագործություններում անմահացված մեծ մարդկային գործքերը կամ ազգային ինքնագիտակցման խթան դարձած պատմական իրադարձությունները հաճախ դառնում են այն բովանդակությունը, որի շուրջը բանաստեղծները կառուցում են իրենց ստեղծագործությունները: Պանեգիրիկներն ու ողբերը սովորաբար շարադրվում են նույն ոճով և բանաստեղծական չափերով ինչ էպոսները և դառնում դրանց անքակտելի գեղարվեստական մասը[3]:

Մեր էպոսը: «**Սասնա ծռեր**» կամ «**Սասունցի Դավիթ**», հայ ժողովրդական հերոսավեպը կամ **էպոսը**: Վիպասացների և բանահավաքների կողմից կոչվել է նաև «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլն: «Սասնա ծռերը» հայ ազգային էպոսն է՝ դյուցազնավեպը, որը ստեղծվել է միջնադարում՝ արաբական արշավանքների ժամանակ: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է

---

[2]Տե՛ս Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976, էջ 1179:

[3] Մ. Թելունց,2015, http://marytelunts.blogspot.com/2013/11/blog-post_18.html

թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման:

Ռուսական Էպոսը: Ռուսական հերոսական էպոսը, բաժանվում է երեք հիմնական մասերի: Ի տարբերություն մեր էպոսի, այնտեղ հերոսների մեջ ժառանգական կապ գոյություն չունի: Ռուսական հերոսական էպոսը բաժանվում է ժամանակագրական երեք ցիկլերի: Առաջինը, դա հնագույն կամ արխիական ցիկլն է, որի հիմնական հերոսներն են Սվյատոգորը, Սամսոնը, Վոլխը, Միկուլոն և այլն: Հաջորդը միջին ցիկլն է, որի վառ արտահայտված կերպարը Իլյա Մուրոմեցն է և նրաեղբայրները՝ Ալյոշան, Դաբրինյան և մյուսները: Եվ երրորդը, ավելի մեզ մոտ ժամանակագրական առումով, Նովգորոդյան ցիկլն է, Սադկո գլխավոր հերոսով: ***Հունական Էպոս:*** Ոդիսական ստեղծվել է, հավանաբար, մ.թ.ա. VIII դարում: «Ոդիսականի» սյուժեն ոչ թե հերոսական է, այլ հեքիաթային, արկածային և կենցաղային: Պատմում է Իթակե կղզու արքա Ոդիսևսի Տրոյական պատերազմից հետո տուն վերադառնալու ճանապարհին տասը տարի տևած արկածների, ինչպես նաև Իթակեում Օդիսևսին սպասող հավատարիմ կնոջը՝ Պենելոպեն բաժին ընկած փորձությունների մասին: «Ոդիսականը» նույնպես բաժանված է 24 գրքերի կամ երգերի: Կառուցվածքի առումով «Իլիականի» համեմատ «Ոդիսականն» ավելի բարդ է: Պոեմն սկսվում է պատմության կեսից, իսկ նախորդող իրադարձությունների մասին տեղեկանում ենք կենտրոնական երգերից: Գլխավոր հերոսն ավելի վառ է արտահայտված: Տրոյա քաղաք-պետության արքայազն Ալեքսանդրը առևանգում է հունական Սպարտա պետության թագավոր Մենելայոսի կնոջը՝ Հեղինեին: Հեղինեն Զևսի դուստրն էր և ուներ առասպելական գեղեցկություն: Հեղինեի առևանգումը դառնում է Տրոյական պատերազմի պատճառ: ***Հնդկական Էպոս:Մահաբհարաթա*** : Մահաբհարաթա հին հնդկական պոեմ-էպոս է: Այն հին հնդկական գրականության երկու մեծ պոեմներից մեկն է: Մյուս մեծ պոեմը«Ռամայանան» է: Մահաբհարաթան պատմում է Բհարաթա թագավորի ժառանգների մասին: Տասնհինգ գրքերից (փարվա) կազմված պատմագրությունների, առակների, լեգենդների,երկխոսությունների, աստվածաբանական, քաղաքական, իրավական բնույթի դատողությունների, առասպելների, ծագումնաբանությունների, օրհներգերի, ողբերգերի ամբողջություն է: Համարվում է, որ նրա մեջ կա աշխարհի ամեն ինչը:Պոեմում պատվում է ռաջաների երկու ընտանիքների միջև պայքարի մասին: Հինգ Փանդավ եղբայրներ վաղ տարիքից մնացել էին առանց հոր: Հորեղբայրն ու հորեղբոր որդիները՝ Կաուրավները, նրանց արտաքսեցին հարազատ վայրերից: Փանդավները մեծանալով դարձան հզոր դյուցազուններ:

Ռամայանա: Ռամայանա հին հնդկական պոեմ-էպոս:

«Ռամայանան» պատմում է արքայորդի Ռամայի անհաջողությունների և հերոսությունների մասին: Պոեմում հավաքված և մշակված են հնադարյան ասքերը, որոնցում ժողովուրդն արտահայտել է իր պատկերացումները մարդու լավագույն հատկությունների մասին: Ռամա արքայորդու թշնամիները կարողանում են նրան 14 տարով արտաքսել մայրաքաղաքից: Նրա հետ միասին կամավոր տարագրվում են նրա կինը՝ գեղեցկուհի Սիտան և եղբայրը: Նրանք բնակություն են հաստատում անտառում, իրենց ձեռքով կառուցած խրճիթում: Իրենց ու Սիտային պաշտպանելու համար եղբայրները ստիպված են լինում մարտնչել անտառում ապրող չար դևերի ու հսկաների դեմ:

Պարսկական Էպոսը՝ Շահնամե: «Շահնամեում» նկարագրվում է Իրանի պատմությունը հնագույն շրջանից մինչև Խոսրով II շահի ժամանակները՝ մինչև մահմեդականության ներթափանցումը երկիր (VII դար): Առաջին տարբերակն ավարտել է 994 թ-ին, իսկ երկրորդը՝ 1010թ-ին: «Շահնամեում» արտացոլված է Բարու և Չարի պայքարի գաղափարը, որը հաճախ դրսևորվում է արդարության ու անարդարության հակադրությամբ. այն ներկայացված է Իրանի (Բարու աղբյուր) և Թուրանի (Չարի կրող) անընդմեջ կռիվների գեղարվեստական պատկերներում և արդարամիտ, իդեալական տիրակալի վերաբերյալ Ֆիրդուսու գաղափարները մարմնավորող կերպարներում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր այս էպոսների հիմքում պատերազմն է, անընդմեջ կռիվները, արդարության և անարդարության հակադրությունները, հաջողությունների ու անհաջողությունների բախումները, չարի ու բարու միջև պայքարը:

2. Սովորողների մոտ հայրենասիրության և արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ[4]: Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց

[4] Chisick, Harvey, 1946- (2005): *Historical dictionary of the Enlightenment*: Lanham, Md.: Scarecrow Press: ISBN 9780810865488: OCLC 408662332

մոտ տարբեր են[5]: Այդ պատճառով էլ ոմանք իրենց համարում են հայրենասեր, մյուսները՝ ոչ[6]:

«Արժեք» բառն առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել[7]: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ: «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ[8]»:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում[9] : «Եթե դուք կարող եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունն

---

[5] Ксения Ларина; Виктор Ерофеев, Алексей Чадаев (2008-08-30): «Культурный шок : российский патриотизм - разрушительная или созидательная сила?»: Радио «Эхо Москвы»:

[6] Пример трактовки патриотизма: «Протоиерей Димитрий Смирнов: „Патриотизм — это любовь к своей стране, а не ненависть к чужой“» — Интервью Протоиерея РПЦ Димитрия

[7] Ս.Մալխասեանց, հայերէն Բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ, Պետկան հրատարակչություն, Երևան 1944

[8] Лавриенко.В. Филасофия: учебник под ред. М. Н. Лавриенко, М. Юрист. 2004.

[9] Բաբանսկի Յու. Կ, Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում, Երևան 1987թ. էջ 12:

իսկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Հայաստանում ավանդաբար՝ դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլև այլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Վերջինս ենթադրում է երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը[10]:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պատական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը , որոնք պետք է տա դպրոցը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է

[10]Պետրոսյան Ա. , Հայրենասիրությունը որպես սակավակազմ դպրոցների աշակերտների սոցիալականացման կարժեհամակարգի ձևավորման գործոն, Երևան 2018, էջ 212

դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Նոր սերնդի արժեհամակարգի ձավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

3. «Սասունցի Դավիթ» էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման հիմքում

«Սասունցի Դավիթ» էպոսը ստեղծվել է 8-10-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր արաբական լծի ներքո և ազատագրական պայքար էր մղում՝ վերականգնելու իր անկախությունն ու պետական ինքնուրույնությունը: Բոլոր հերոսներն այս հիմական գաղափարի կրողներն են: էպոսի գաղափարը ժողովրդի մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ազատության, անկախության, պետականության: Էպոսում իրացվող գաղափարներն արդիական են,քանի որ ժողովորդը ինչպես միշտ, այնպես էլ այսօր ձգտում է ազատության, դժգոհում է անարդարությունից և փափագում ունենալ արդար ու անկախ իշխանություն: Ուստի, մեր՝ ուսուցիչներիս, կարևորագույն խնդիրը պետք է լինի Էպոսի միջոցով աշակերտներին ուսուցանել հայրենասիրություն, հոգատարություն, հավատարմություն, ազգային արժեքների գնահատում և պահպանում:

Էպոսում պետության մոդելը բոլոր ժամանակների համար է: Պետության ղեկավարը պետք է լինի ազնիվ,արդար, նվիրված իր ժողովրդին, ապրի ժողովրդի ցավով օգնի ու պաշտպանի: Այսպիսին են եղել էպոսի գլխավոր կերպարները: Նրանք առաջնահերթ մտածել են հասարակ ժողովրդի մասին, կառուցել տներ, պաշտպանել օտարից, ծաղկեցրել երկիրը:

Մեր էպոսը մեզ է հասել անաղարտ վիճակում, առանց անցնելու անհատական ստեղծագործության բովով, որով ավելի է բարձրանում նրա արժեքը որպես բուն ժողովրդական մտածելակերպի արտահայտություն: Եվ եթե այսօր խոսք է բացվում «Սասունցի Դավթի» հարյուրամյա գրավոր կյանքի մասին, դրա տակ հասկանում ենք ժողովրդի կենդանի խոսքից կատարված ստուգապատում գրառումները միայն:

Ժողովրդի անաղարտ ստեղծագործություն լինելու հանգամանքը մեր էպոսի յուրահատուկ ու տարբերակիչ գծերից մեկն է[11]:

Էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են դիցաբանական սյուժեների «զգեստավորմամբ», այլաբանական դիպվածներով և ծածկագրված կարևոր խորհուրդներով, ինչն էլ ենթադրում է որ նյութը պետք է անցնի կարևոր քննություն և զարգացնի աշակերտների մոտ քննադատական մտածողություն: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ու ազգային արժեքների ձևավորման պահպանման գործում փաստելով ազգային ինքնության արդիականացման և նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը: Հայկական «Սասունցի Դավիթ» էպոսն ընդգրկվել է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական մեծագույն արժեքի զգացման՝ հայրենասիրություն դաստիարակելու համար, էպոսը հիանալի հնարավորություններ է ընձեռում: Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն են, որոնք գեղարվեստական մարմնավորում են ստացել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում: Սասնա դյուցազունները իրենց մարդկային բնավորության գծերով հանդերձ անհատական միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորում՝ բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Սանասարն ու Բաղդասարը հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետևորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռքբերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին: Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս առյուծաձև Մհերը: Իմանալով ,որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ

[11] Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. էջ 54-58

քայլին, որպեսզի իրենից հետո Սասունն անտեր ու անպաշտպան չմնա:

Դավթի կերպարում մարմնավորվել են իրեն ծնող ժողովրդի ազգային հատկանիշները: Ազատության գաղափարը էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն: Ահա դրա մեկ օրինակը. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին: Դյուցազնավեպում ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ: Ատելությամբ է վերաբերվում թալանով, կողոպուտով ապրողների նկատմամբ: Լայն տեղ է տրվում հնից ժառանգած և հայ
ժողովրդի համար ավանդություն դարձած կյանքի երևույթներին, դարերի ընթացքում ձևավորված, նրան հարազատ դարձած, նրա կենցաղի մեջ մտած ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին: Դրանցից են՝

- *մեծ ընտանիքի նկատմամբ խոր հարգանք ունենալը,*
- *նրան ենթարկվելը,*
- *անչափահաս ժառանգին հորեղբոր,մորեղբոր կողմից խնամելը*
- *փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդներին հետևելը:*

Հայ ժողովուրդը չի ստորադասել կնոջը տղամարդուց. «Առյուծն առյուծ է,էղնի էգ,թե որձ»: Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի ազատության ձգտող կենդանի ոգին:

«Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի ստեղծած բանավոր հարուստ ժառանգության ամենափայլուն արտահայտությունն է, գեղարվեստական մի հոյակապ կոթող, որը դուրս է եկել միջազգային ասպարեզ և կանգնել համամարդկային արժեք ներկայացնող ստեղծագործությունների կողքին[12]: Ձևավորվելով 8-10-
րդ դարերում, երբ մեր ժողովուրդը հաղթական պայքար էր մղում արաբական նվաճողների դեմ, էպոսը բանավոր կերպով փոխանցվել է սերնդից սերունդ, տարածվել

[12] «Սասունցի Դավիթ»-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ն ճանաչել է որպես համամարդկային մշակութային արժեք, 5 Դեկտեմբեր 2012,https://armenpress.am/arm/news/701670

Հայաստանի տարբեր գավառներում և բազմաթիվ պատումներով հասել մինչև մեր օրեր: Իր հազարամյա բանավոր գոյության ընթացքում էպոսը հղկվել, բյուրեղացել է ժողովրդական ասացողների կողմից, ձեռք բերել գաղափարական հարուստ բովանդակություն, դարձել մեր ժողովրդի ոգու, կյանքի ու պատկերացումների գեղարվեստական մարմնավորումը:

«Սասունցի Դավիթ» էպոսն արտահայտում է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով, ու սխրագործություններով, դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը, կարող ենք ասել, որ «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը և յուրացումը եղել է և մնում է հայ դպրոցի գրականության ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը: Մեր նպատակն է դաստիարակել,կերտել քննադատական միտք ունեցող, ինքնուրույն, ինքնակրթությամբ մշտական զարգացումը կարևորող, բարձր պատասխանատվությամբ հասարակության անդամ, անհատ որը կկարողանա համարձակ ընդառաջ գնալ այն բոլոր մարտահրավերներին, որոնք ընթացող ժամանակը մշտապես դնելու է իր, իր հայրենիքի և աշխարհի առջև:

Էպոսը համարվում է ամենակարևոր հենակետը, որն ապահովելու է հայ մարդու դաստիարակությունը ազգային ոգով, այն լինելու է սերունդների՝ անցյալի դեպքերին ու իրադարձություններին ուղղված սիրով ու հպարտությամբ լի հայացքը, դեպի ապագա գնացող ժողովրդի առաջընթացը:

Եզրակացություններ

Այսպիսով՝ ***«Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում»*** խորագրով հետազոտական աշխատանքի շրջանակներում կարող են ք անել հետևյալ եզրահանգումները.

- *Բոլոր երկրների էպոսների հիմքում պատերազմն է, անընդմեջ կռիվները, արդարության և անարդարության հակադրությունները, հաջողությունների ու անհաջողությունների բախումները, չարի ու բարու միջև պայքարը:*
- *Արժեքներն առանցքային եմ մարդկային մտքի, զգացմունքների և վարքագծի միջև: Հետևաբար աշակերտների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մեծ հնարավորություններ է ստեղծում բարձր համամարդկային արժեքներով պայմանավորված հասարակութուն ձևավորելու հարցում:*
- *Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժի ուշադրության կենտրոնում:*

Մանկավարժը լաւսավորում է երեխայի ապագա կյանքի ուղին սովորեցնելով նրան կյանքի ճիշտ ուղին,խոչընդոտները հաղթարելու ելքերը և փոթորիկներին դիմակայելու համար մատուցում է անհրաժեշը:

- *«Սասունցի Դավիթ» էպոսը մեզ հաղորդում է հսկայական տեղեկություններ հայ ժողովրդի ապրելակերպի, ընտանիքի, ներընտանեկան և հասարակության մեջ փոխհարաբերությունների, կրոնական ընկալումների, ծիսական արարողակարգերի և հավատալիքների մասին:*
- *«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասեր: Դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ: այդ հնարավորությունն ընձեռում է գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը:*

Գրականություն

1. Գ.Մարդյան,<<Սասունցի Դավիթ>>էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ
2. Ա.Գևորգյան ,<<Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում>>,Երևան,2002
3. «Սասունցի Դավիթ»-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ն ճանաչել է որպես համամարդկային մշակութային արժեք, 5 Դեկտեմբեր 2012,https://armenpress.am/arm/news/701670
4. Յու.Կ Բաբանսկի, Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում, Երևան 1987թ. էջ 12:
5. Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976, էջ 1179:
6. ՀՍ հանրագիտարան հատոր 4, Ե. 1978:
7. Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. էջ 54-58
8. Մ. Թելունց,2015, http://marytelunts.blogspot.com/2013/11/blog-post_18.html
9. Պետրոսյան Ա., Հայրենասիրությունը որպես սակավակազմ դպրոցների աշակերտների սոցիալականացման կարժեհամակարգի ձևավորման գործոն, Երևան 2018, էջ 212

10. Ս.Մալխասեանց, հայերէն Բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ, Պետկան հրատարակչություն, Երևան 1944:
11. Ксения Ларина; Виктор Ерофеев, Алексей Чадаев (2008-08-30): «Культурный шок : российский патриотизм - разрушительная или созидательная сила?»: Радио «Эхо Москвы»:
12. Лавриенко.В. Филасофия: учебник под ред. М. Н. Лавриенко, М. Юрист. 2004.
13. Пример трактовки патриотизма: «Протоиерей Димитрий Смирнов: „Патриотизм — это любовь к своей стране, а не ненависть к чужой“» — Интервью Протоиерея РПЦ Димитрия
14. Chisick, Harvey, 1946- (2005): *Historical dictionary of the Enlightenment*: Lanham